ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ГАВАРСКИЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

REPUBLIC OF ARMENIA
STATE UNIVERSITY OF GAVAR
http://www.gsu.am

1201, Գավառ, Հրանտ Հակոբյան 1
1201, Гавар,ул. Гранта Акобяна 1
1 Hrant Hakobyan str., 1201,Gavar

+ 374 60 46 03 02
+ 374 264 2 57 75
+ 374 60 46 12 99

‹‹ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ›› ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառ **2026 թ. հունվարի 17**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 43-րդ կետի 1-ին ենթակետը, Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.5-րդ կետի 1-ին ենթակետը՝ հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը ս. թ. հունվարի 17-ին հրավիրեց «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ:

2026թ. հունվարի 7-ին ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկվել էր խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանի հրավերը և նիստի օրակարգը: Իսկ 2026թ. հունվարի 10-ին՝

հոգաբարձուների խորհրդի նախագահին և բոլոր անդամներին ուղարկվել էր Գավառի պետական համալսարանի համացանցային կայքի ‹‹Փաստաթղթեր›› բաժնի ‹‹Հաշվետվություններ›› մասում տեղադրված ԳՊՀ 2024-2025 ուստարվա հաշվետվության հղումը (https://gsu.am/wp-content/uploads/2026/01/2024-2025.pdf)՝ նիստից առաջ հաշվետվությանը ծանոթանալու նպատակով:

2026թ. հունվարի 17-ին գումարված նիստին Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի 20 անդամից մասնակցեցին 13 անդամ (ստորագրված ներկայաթերթիկը կցվում է):

Նիստին հարգելի պատճառներով չմասնակցեցին հոգաբարձուների խորհրդի 7 անդամ՝

1. Արման Անդրիկյանը,
2. Յուրի Շուքուրյանը,
3. Էմիլ Գևորգյանը,
4. Վիկտոր Կատվալյանը,
5. Աշխունջ Պողոսյանը,
6. Անահիտ Վարդանյանը,
7. Սյուզաննա Բունիաթյանը:

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը խորհրդի քվեարկությանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների, համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվության և 2026 թվականի զարգացման տարեկան ծրագրի մասին.
2. ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
3. ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին.
4. ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքի մասին.

5. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակի մասին.
6. ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգի մասին

Զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան

Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների, համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվության և 2026 թվականի զարգացման տարեկան ծրագրի մասին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Հակոբյանը հոգաբարձուների խորհրդին շնորհանդեսի միջոցով (կցվում է) ներկայացրեց «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքները և 2026 թվականի զարգացման տարեկան ծրագիրը:

Զեկուցողը տեղեկացրեց, որ Գավառի պետակական համալսարանի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն իրենից ներկայացնում է 277 էջից բաղկացած փաստաթուղթ, որը բաց հասանելիությամբ տեղադրված է Գավառի պետական համալսարանի համացանցային էջի (www.gsu.am) «Փաստաթղթեր» բաժնի «Հաշվետվություններ» տիրույթում: Այն պարունակում է բուհի գործունեության կրթական, սոցիալ-մշակութային, գիտահետազոտական, նորարարական, արտաքին կապերի և միջազգայնացման, ֆինանսական, տնտեսական, տեխնիկական ապահովման, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ուղղություններով կատարված աշխատանքի վերլուծություն:

Հաշվետվությունը ներառում է բուհի գործունեության ուժեղ և թույլ կողմերի գնահատում, դրանց հիմնավորումները, քանակական և որակական տվյալներ, վիճակագրական աղյուսակներ, գործողությունների ծրագրեր, ինչպես նաև հետագա զարգացմանն ուղղված առաջնահերթ անելիքներ:

Տիկին Հակոբյանը նշեց, որ հաշվետվության յուրաքանչուր էջի գրառում համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական անձնակազմի անդամների կատարած փոխհամաձայնեցված աշխատանքի, մտքի և ջանքի արդյունք է, որի համար շնորհակալություն հայտնեց Գավառի պետական համալսարանի ողջ անձնակազմին, ինչպես նաև ուսանողներին, ովքեր համալսարանին են վստահել իրենց շատ կարևոր՝ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Զեկուցողը նշեց, որ բուհն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով առաքելությունից, որը ունի ելակետային նշանակություն: Գավառի պետական համալսարանի առաքելությունն է՝ «Ուսանողի ներուժի բացահայտումը և զարգացումը, առաքինի մարդու, բարեխիղճ քաղաքացու, որակյալ մասնագետի պատրաստումը»:

Գավառի պետական համալսարանն իր գործունեությունը ծավալել և ծավալում է՝ համաձայն ՀՀ Սահմանադրության, կրթության և գիտության ոլորտները կարգավորող օրենսդրության, «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիր» օրենքի և գործողությունների պլանի, ԳՊՀ կանոնադրության, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023–2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, ԳՊՀ 2025թ. տարեկան գործողությունների պլանի և ԳՊՀ ներբուհական իրավական ակտերի:

Ռ. Հակոբյանը նշեց, որ Գավառի պետական համալսարանում բոլոր ոլորտներով և ուղղություններով ընթացող գործընթացները կարգավորված են օրենսդրական, ենթաօրենսդրական և ներբուհական իրավական ակտերով, ինչն ապահովում է բուհի կայունությունը, կանխատեսելիությունը և սահմանափակում է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Գավառի պետական համալսարանը 2024-2025 ուսումնական տարում առաջնորդվել է «Կրթությունը՝ հաջողության ճանապարհ» կարգախոսով՝ որպես ուղենիշ, որակյալ կրթությունը դիտարկելով հաջողության և իմաստավորված կյանքի հիմք:

Հիմք ընդունելով ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը, 2025 թվականի տարեկան գործողությունների ծրագրին համապատասխան՝ ԳՊՀ-ում 2024-2025 ուսումնական տարում աշխատանքներն իրականացվել են հետևյալ գերակա ուղղություններով.

1. կրթական, սոցիալ-մշակութային,
2. գիտահետազոտական, նորարարական,
3. կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման,
4. հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման,
5. հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման:

Ներկայացվեց Գավառի պետական համալսարանի գործունեությունը կրթական, սոցիալ-մշակութային ոլորտներում, նշվեց, որ 2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ-ն ավարտել են 188 շրջանավարտ, առկա և հեռակա բաժիններ, բակալավրիատ և մաագիստրատուրա ընդունվել են ընդհանուր 234 ուսանող:

Իր գործունեության ավելի քան երեք տասնամյակի ընթացքում Գավառի պետական համալսարանը պատրաստել է 9000-ից ավելի մասնագետներ, ովքեր աշխատում են հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ նպաստելով սոցիալական զարգացմանն ու առաջընթացին:

Ուսումնական և կրթական ոլորտում բարելավվել են բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը, մասնագրերը, ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, թեմատիկ պլանները և կրթական վերջնարդյունքները:

Գավառի պետական համալսարանը 2024-2025 ուստարում իրականացրել է 6 ՄԿԾ-ի ներքին փորձաքննություն՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ.

1. «Իրավագիտություն»,
2. «Պատմություն»,
3. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»,
4. «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)»,
5. «Տնտեսագիտություն»,
6. «Համակարգչային ճարտարագիտություն»:

Վեց ՄԿԾ-ի մասով էլ եղել են դրական կարծիքներ, առաջարկություններ, նկատառումներ, դիտարկումներ, որոնք հաշվի են ուսումնական պլանները բարելավվելիս: Ընթացքի մեջ են ևս 4 մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության աշխատանքները՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ.

1. «Հայոց լեզու և գրականություն»,
2. «Անգլերեն լեզու և գրականություն»,
3. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)»,

4. «Սերվիս»:

Ռ. Հակոբյանը ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին աղյուսակների միջոցով ներկայացրեց 2023-2024 և 2024-2025 ուսումնական տարիներին ԳՊՀ ուսանողների շարժը, կատարեց համեմատական վերլուծություն:

Հաշվետու ուստարում ակտիվորեն գործել են ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ Ուսանողական խորհուրդը, Ուսանողական գիտական ընկերությունը, ստեղծագործողների, տնտեսագետների, բնագետների, տուրիզմի ակումբները:

Բուհում կազմակերպվել են 100-ից ավելի միջոցառումներ, որոնց նպատակը եղել է ուսանողների սոցիալ-մշակութային, մտավոր, ստեղծագործական, լեզվական, հաղորդակցական, տեխնիկական, կազմակերպական, առաջնորդության կարողությունների զարգացումը:

2024-2025 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում անցկացվել են դասախոսների վերապատրաստումներ «Արհեստական բանականության գրագիտություն, հրահանգների ճարտարագիտություն» թեմայով՝ թվային գործիքները կրթական և հետազոտական գործընթացներում օգտագործելու նպատակով:

Ուսանողների համար կազմակերպվել են լրացական դասընթացներ «Թվային գրագիտություն» թեմայով:

Այնուհետև Ռ. Հակոբյանը ներկայացրեց Գավառի պետական համալսարանի գործունեությունը գիտահետազոտական և նորարարական ոլորտներում՝ նշելով, որ 2024-2025 թվականներին կազմակերպվել է հանրապետական և միջազգային 4 գիտաժողով, որոնց արդյունքում հրատարակվել է ԳՊՀ գիտական հոդվածների 5 ժողովածու՝ N 16, 17, 18, 19, 20 պրակները, որոնք ընդգրկում են 288 հոդված, ընդհանուր ծավալով ավելի քան 2580 էջ:

ԳՊՀ դասախոսները մասնակցել են նաև հանրապետական և միջազգային գիտաժողովների, ունեն հրապարակումներ գիտական շտեմարաններում, այդ թվում՝ բարձր ցիտման շտեմարաններում: Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ 109 դասախոսները ՀՀ և միջազգային գիտական պարբերականներում հրապարակել են ընդհանուր թվով 144 գիտական հոդված, որոնցից 13-ը տպագրվել են հղման բարձր ցուցիչ ունեցող գիտական պարբերականներում:

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի էլեկտրոնային շտեմարանն արդիականացվել է՝ համապատասխանելով «Բաց գիտություն» համակարգի սկզբունքներին: Շտեմարանում կատարվել են կառուցվածքային և տեխնիկական բարելավումներ, իսկ ԳՊՀ հրատարակած բոլոր հոդվածներն ունեն թվային օբյեկտի նույնականացման ցուցիչ (DOI) և համընդհանուր տասնորդական դասակարգիչ (ՀՏԴ):

Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչ, ԳՊՀ շրջանավարտ, Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանը հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտում և արժանացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Իսկ ԳՊՀ «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի գերազանցիկ շրջանավարտ, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Կարեն Մաստոյանը հաջողությամբ պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում և արժանացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության ջանքերով կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ: Մասնավորապես, Գրոզնիի պետական նավթային տեխնիկական համալսարանի հետ անցկացվել է միջազգային ուսանողական գիտաժողով, որին մասնակցել են հինգ երկրների ավելի քան 20 բուհերի 87 ուսանողներ և նրանց դասախոսները՝ որպես գիտական ղեկավարներ: Գիտաժողովի եռալեզու նյութերը հրատարակվել են Գրոզնիի համալսարանի միջոցներով, 747 էջ ընդհանուր ծավալով:

Անցկացվել է նաև ուսանողական գիտաժողով՝ «Գավառ բազմաբնակավայր համայնքի զարգացման մարտահրավերները» թեմայով, որին մասնակցել են համալսարանի ուսանողներն ու դասախոսները, ինչպես նաև Գավառի համայնքապետարանի, Գավառի գյուղատնտեսական քոլեջի և Գեղարքունիքի մարզի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

ԳՊՀ-ում կայացել է միջազգային գիտական նստաշրջան՝ նվիրված գլոբալացվող աշխարհում մշակույթի և արվեստի դերին, որն անցկացվել է զուգակցված ձևաչափով՝ առկա և հեռավար: Առկա ձևաչափով մասնակցել են Հայաստանի, Լեհաստանի,

Ռուսաստանի և Բելառուսի ներկայացուցիչները, իսկ այլ երկրների մասնակիցներ միացել են հեռավար:

Համալսարանում շարունակվել են աշխատանքները «Վիրտուալ համալսարան» ծրագրի իրականացման ուղղությամբ: Վերանայվել և բարելավվել են ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը՝ ‹‹E-learn.GSU››, արդիականացվել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման էլեկտրոնային՝ ‹‹Examination.GSU›› ծրագիրը, լրացվել է ԳՊՀ էլեկտրոնային գրադարանը՝ ‹‹E.library.GSU››, գործարկվել է «Առցանց դիմում» համակարգի նոր տարբերակը, ներդրվել են ստուգարքների և քննությունների էլեկտրոնային տեղեկագրերը, գործարկվել է ԳՊՀ դասաժամերի հաշվառման էլեկտրոնային նոր համակարգը, կիրառվել է «ԳՊՀ թվային օրացույցի» արդիականացված մոդելը:

Զեկուցողը նշեց, որ Գավառի պետական համալսարանի գերակա ուղղություններից է կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսային ապահովման ոլորտը՝ կարևորելով համալսարանի բնականոն գործունեությունը, կենսապահովման գործառույթների իրականացումը, ներբուհական տնտեսության պատշաճ կազմակերպումը, ԳՊՀ ֆիզիկական, սոցիալական, վիրտուալ միջավայրերի գրավչության աճը:

2024-2025 ուսումնական տարում արդյունավետ գործել են ԳՊՀ կառավարման մասնակցային կառուցակարգերը, գումարվել են հոգաբարձուների խորհրդի 2 նիստ, գիտական խորհրդի 15 նիստ, ռեկտորատի 20 նիստ, ըստ անհրաժեշտության հրավիրվել են օպերատիվ խորհրդակցություններ ու ժողովներ: Սահմանված կարգով տրվել է ԳՊՀ ռեկտորի ընդհանուր թվով 382 հրաման, ձևակերպվել է 142 գործուղում:

2024-2024 ուստարում ԳՊՀ մուտքագրվել և համապատասխան մակագրություններով, կարգադրություններով և ուղեկցող գրություններով ելքագրվել է 2553 դիմում, ընթացք է տրվել 1120 զեկուցագրի: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից, հանրային իշխանության՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել և համալսարանի քարտուղարություն է մուտքագրվել 362 պաշտոնական գրություն, ելքագրվել է ԳՊՀ 458 գրություն, տրամադրվել են 512 տեղեկանքներ, 70 ակադեմիական տեղեկագրեր:

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ 50 աշխատակից ստացել է նյութական պարգևատրում: Ուսման վարձավճարի ամբողջական և մասնակի զեղչ է ստացել 84 ուսանող: ՀՀ պետական բյուջեի, ԳՊՀ բյուջեի միջոցներից, ԳՊՀ բարերարների, բարեգործական հիմնադրամների միջոցներով ուսման վարձի ամբողջական և մասնակի զեղչ է ստացել համալսարանի ուսանողների 60 տոկոսից ավելին:

Ներկայացվեցին նաև Գավառի պետական համալսարանի գործունեության արդյունքները հանրային պատասխանատվության, արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտներում: Նշվեց, որ ԳՊՀ-ում ընթացքի մեջ են Եվրոպական միության «ERASMUS+ KPI4HE. Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱԾ) ստեղծում», «ERASMUS+ T-GREEN. հետբակալավրիական կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի», ‹‹ERASMUS+ VIRTUAL VOYAGES. վիրտուալ ճանապարհորդությունների միջոցով նոր կարողությունների ձեռքբերում›› ծրագրերը:

Եվրոպական միության «ERASMUS+T-GREEN» ծրագրի նպատակներին համապատասխան՝ ԳՊՀ-ն ստացել է «Կառավարում» մասնագիտության գծով մագիստրոսական ծրագրի լիցենզիա և 2025-2026 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ համատեղ իրականացնում է «Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում» մասնագիտացմամբ կրթական ծրագիր:

Հաշվետու ժամանակաշրջանում վերակնքվել են համագործակցության համաձայնագրեր եվրոպական մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, եվրոպական բուհերում սովորել են ԳՊՀ 9 ուսանող, դասավանդել, միջազգային շաբաթի մասնակցել և վերապատրաստում անցել 6 դասախոս:

Գավառի պետական համալսարանը շարունակել է իր որդեգրած հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը՝ հիմք ընդունելով ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2023-2027թթ. հակակոռուպցիոն ծրագիրը: Համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը իր գործունեությունն իրականացնում է օրինականության և օրենքի առջև բոլորի

հավասարության սկզբունքներով՝ բացառելով կոռուպցիոն երևույթներ և ղեկավարվելով ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգով:

Ռ. Հակոբյանը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բուհում ձևավորվել է Էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ: Նույն օրենքի պահանջով նախատեսվում է նաև ընդունել Էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը, որի նախագիծը ներկայացվեց բուհի հոգաբարձուների խորհրդին:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ԳՊՀ-ի զարգացման հիմնական ուղղություններին՝

- Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա բուհի 2026 թվականի տարեկան զարգացման ծրագրի իրականացում,
- ԳՊՀ 2023-2027թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթների կատարում,
- ԳՊՀ տարեկան գործողությունների պլանին համապատասխան՝ կատարողականի արդյունավետության ցուցիչների ապահովում,
- կրթական ծրագրերի արդիականացում՝ ելնելով ժամանակի հրամայականից, գործատուների պահանջներից, Եվրամիության ծրագրերի շրջանակներում իրականացվող բարեփոխումներից, արտերկրի առաջատար բուհերի փորձից, հաշվի առնելով ուսանողների կրթական ակնկալիքները, գիտության արդի նվաճումները, արհեստական բանականության առաջարկած հնարավորությունները,
- ԳՊՀ ‹‹Վիրտուալ համալսարան›› համակարգի համալրում,
- ԳՊՀ դասախոսների գիտահետազոտական աշխատանքների խրախուսում,
- ԳՊՀ շրջանավարտների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծում՝ ըստ մասնագիտությունների, գրագողության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,
- ԳՊՀ կրթական գործընթացում արհեստական բանականության գործիքների, թվային ուսուցողական տեխնոլոգիաների և հնարավորությունների կիրառում,

- ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, կրթական, բնապահպանական և այլ հիմնախնդիրների հետազոտություն, գործնական լուծումների առաջարկում, քննարկումների, գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպում,
- ԳՊՀ ակադեմիական, վարչական, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական անձնակազմերի աշխատավարձի բարձրացում՝ 10 տոկոսի սահմաններում,
- ԳՊՀ գործունեության բոլոր ուղղություններով զարգացման ծրագրերի իրականացում:

Ռ. Հակոբյանը եզրափակեց զեկուցումը՝ նշելով, որ 2025-2026 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանը որդեգրել է ‹‹Որակյալ կրթություն՝ որակյալ կյանք›› կարգախոսը, շարունակելով ՀՀ Գեղարքունիքի մարզի բարձրագույն կրթության և գիտության կենտրոնի իր կարևոր առաքելությունը:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով 2024-2025 ուսումնական տարում կատարված աշխատանքների, համալսարանի հակակոռուպցիոն ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվության, 2026 թվականի տարեկան զարգացման ծրագրի ներկայացումից հետո Ռ. Հակոբյանը պատասխանեց Հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանի հարցերին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը նշեց, որ դասական համալսարաններն իրականացրել են երեք հիմնական գործառույթ՝ գիտելիքի փոխանցում (կրթություն), գիտելիքի ստեղծում (գիտություն) և գիտելիքի տարածում (լուսավորչական գործունեություն): Ելնելով այդ մոտեցումից՝ նա առաջարկեց, որ հատուկ ուշադրության արժանանա համալսարանի լուսավորչական գործունեությունը: Պարոն Ղազարյանը բարձր գնահատեց համալսարանի միջազգային համագործակցությունը եվրոպական մի շարք բուհերի հետ և առաջարկեց զարգացնել այդ ուղղությունը՝ մասնավորապես արտասահմանյան համալսարանների գիտնականների հետ համատեղ մագիստրոսական թեզերի ղեկավարում իրականացնելու միջոցով:

Անդրադառնալով դասախոսների գիտական հրապարակումներին, որոնցից մի մասը տպագրվել է բարձր հղման ցուցիչ ունեցող գիտական շտեմարաններում, պարոն Ղազարյանը առաջարկեց իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելու համար

դասախոսների շրջանում h-index ունեցող գիտնականների առկայությունը: Նա առաջարկեց հրապարակումների արդյունքների հիման վրա ձևավորել համալսարանի առավել ակտիվ գիտնականների ցանկը և դիտարկել նրանց խրախուսման՝ աշխատավարձի հավելավճարների տրամադրման հնարավորությունը:

Պատասխանելով առաջին հարցին՝ ռեկտոր Ռ. Հակոբյանը նշեց, որ Գավառի պետական համալսարանը հաշվետու ժամանակաշրջանում ակտիվորեն համագործակցել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, տարածաշրջանի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման, իրազեկման և բուհ ներգրավման նպատակով:

Նա նաև տեղեկացրեց, որ ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի կողմից կազմակերպվել են արհեստական բանականության կիրառությունների վերաբերյալ սեմինարներ՝ նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար, ինչը հանդիսանում է համալսարանի լուսավորչական գործունեության կարևոր բաղադրիչ:

Երկրորդ հարցին անդրադառնալով՝ ռեկտորը նշեց, որ Եվրոպական միության «ERASMUS+T-GREEN» ծրագրի շրջանակներում իրականացվող «Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում» կրթական ծրագրի միջոցով Գավառի պետական համալսարանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը իրականացնում են համատեղ կրթական ծրագիր, որի ավարտին կտրամադրվի համատեղ դիպլոմ:

Ինչ վերաբերում է համատեղ գիտական ղեկավարումներին, ռեկտորը նշեց, որ ԳՊՀ-ն ունեցել է տնտեսագիտական մագիստրոսական թեզերի համատեղ ղեկավարումներ Գրոզնիի համալսարանի հետ:

Պատասխանելով երրորդ հարցին՝ Ռ. Հակոբյանը տեղեկացրեց, որ համալսարանում գործում է դասախոսների վարկանիշավորման համակարգ, որի հիման վրա իրականացվում է դասախոսների աշխատանքի գնահատում և սահմանված կարգով տրամադրվում են խրախուսական պարգևատրումներ:

Էդուարդ Ղազարյանը բարձր գնահատեց կատարված աշխատանքի արդյունքները և առաջարկեց սահմանված կարգին համապատասխան հավանություն տալ ռեկտորի հաշվետվությանը և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 1).

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 11-րդ կետերով, 26-րդ հոդվածի 4-րդ մասով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասով, 9-րդ մասի 10-րդ կետով, 31-րդ հոդվածի 13-րդ մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 40-րդ կետի 3-րդ, 4-րդ և 7-րդ ենթակետերը, 43-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 54-րդ կետի 4-րդ ենթակետը և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, լսելով 2024-2025 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի գործունեության և հակակոռուպցիոն ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի հաշվետվությունը, ինչպես նաև 2026 թվականի համալսարանի տարեկան զարգացման ծրագրի մասին առաջարկությունները՝

1. **Հավանություն տալ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը (միաձայն կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**
2. **Հավանություն տալ 2024-2025 ուսումնական տարում ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի հակակոռուպցիոն ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը (միաձայն կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**
3. **Հավանություն տալ ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի տարեկան զարգացման ծրագրին (միաձայն կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**
4. **‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2024-2025 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար (միաձայն կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**

2. ԼՍԵՑԻՆ.

‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Հաշվետվությունը ներկայացվեց շնորհանդեսի միջոցով /կցվում է/: Այն ներառում էր Գավառի պետական համալսարանի 2025 թվականի ֆինանսական տարվա եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման արդյունքները (ԳՊՀ 2025թ. բյուջեի կատարողականը կցվում է): Զեկուցողը նշեց, որ Գավառի պետական համալսարանի 2025 թվականի բյուջեն կատարելիս և 2026 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ 2023-2027 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը:

Գավառի պետական համալսարանի 2025 թվականի և 2026 թվականի բյուջեները կազմվել են մուտքերի և ելքերի համամասնության պահպանման, եկամուտների և ծախսերի հավասարակշռության ապահովման սկզբունքով:

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԳՊՀ բյուջեի մնացորդը կազմել է 63.316.200 ՀՀ դրամ: 2025 թվականի բյուջեի ընդհանուր եկամուտները նախատեսվել են 277.438.400 ՀՀ դրամի չափով, սակայն փաստացի հավաքագրվել է 342.449.200 ՀՀ դրամ: Պետական բյուջեից նախատեսված 73.230.100 ՀՀ դրամի փոխարեն ստացվել է 85.809.900 ՀՀ դրամ, որը պայմանավորված է սոցիալապես անապահով ուսանողների թվի աճով:

2025 թվականի եկամուտները վճարովի ուսուցման ծառայությունից կազմել են 233.284.000 ՀՀ դրամ, որը 53.183.700 ՀՀ դրամով ավել է նախատեսված 180.100.300 ՀՀ դրամից: Այն կազմել է մուտքերի 68,12 %-ը:

Գործառնական այլ եկամուտները 2025 թվականին կազմել են 4.802.200 ՀՀ դրամ (1.4%), ինչը 4.405.800 դրամով (47.8%) պակաս է նախատեսվածից:

Ոչ գործառնական եկամուտներ նախատեսված էին 14.900.000 ՀՀ դրամ, մինչդեռ փաստացի կազմել են 18.553.200 ՀՀ դրամ՝ պլանը գերազանցելով 24,5 %-ով: Եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորմամբ, բանկային ավանդներից ստացված տոկոսային եկամուտներով,

ինչպես նաև ԳՊՀ հանրակացարանի և Co-working ծառայություններից ստացված մուտքերով:

2026 թվականին Եվրոպական միության դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորումը կշարունակվի:

Ծախսերը նախատեսվել են 313.794.600 ՀՀ դրամի չափով, սակայն փաստացի կատարվել են 240.597.600 ՀՀ դրամ, քանի որ ծախսային հոդվածների մեծ մասով կատարվել են խնայողություններ:

Աշխատանքի վարձատրության, լրավճարների, հավելավճարների և պարգևատրման ծախսերը 2025 թվականին կազմել են 199.366.400 ՀՀ դրամ՝ նախատեսված 240.000.000 ՀՀ դրամի փոխարեն:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը 2025 թվականին կազմել են 2.604.800 ՀՀ դրամ, որը պակաս է նախատեսված 3.330.000 ՀՀ դրամից:

Տրանսպորտային միջոցների ծախսերը 2025 թվականին կազմել են 4.940.000 ՀՀ դրամ՝ նախատեսված 5.398.000 ՀՀ դրամի փոխարեն:

Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսերը կազմել են 1.538.400 ՀՀ դրամ, որը պակաս է նախատեսված 1.972.000 ՀՀ դրամից:

Գիտահետազոտական գործունեության ծախսերը 2025 թվականին կազմել են 1.796.400 ՀՀ դրամ՝ նախատեսված 6.800.000 ՀՀ դրամի փոխարեն:

Նախատեսվել են կապիտալ ծախսեր 18.350.000 ՀՀ դրամ, սակայն կատարվել են 3.995.200 ՀՀ դրամի չափով:

2025 թվականին համալսարանը ցուցադրել է դրական կատարողական, ինչը պայմանավորված է եկամուտների աճով և ծախսերի նվազմամբ: Այս արդյունքը հանգեցրել է մնացորդի աճի: ԳՊՀ-ն հավաքագրել է նախատեսված ինչպես գործառնական, այնպես էլ ոչ գործառնական եկամուտները, կատարել իր բոլոր հարկային և ֆինանսական այլ պարտավորությունները, ժամանակին վճարել աշխատավարձերը, կիրառել ուսման վարձավճարի զեղչեր, հնարավորության սահմաններում խրախուսել մասնագիտական, մանկավարժական, գիտահետազոտական գործունեության ոլորտներում բարձր արդյունքներ արձանագրած դասախոսներին և 2026 թվական մուտք գործել 165.625.700 ՀՀ դրամ մնացորդով:

Զեկուցողն ամփոփելով նշեց, որ Գավառի պետական համալսարանի 2025 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականը ցույց է տալիս, որ համալսարանը

արդյունավետ կերպով կառավարում է իր ֆինանսական միջոցները: Ընդհանուր առմամբ եկամուտները գերազանցել են նախատեսվածը, իսկ ծախսերը մնացել են նախատեսվածի սահմաններում: Կան ծախսային հոդվածներ, որոնց գծով առկա են էական խնայողություններ, այսինքն՝ համալսարանում գործել է խելամիտ խնայողության սկզբունքը:

Գավառի պետական համալսարանի 2025 թվականի ֆինանսական տարվա հաշվետվության քննարկումից հետո հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը հարցը դրեց քվեարկության:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 10-րդ կետերով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 28-րդ հոդվածի 9-րդ մասի 10-րդ կետով, 31-րդ հոդվածի 14-րդ մասով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 40-րդ կետի 7-րդ և 9-րդ ենթակետերը, 54-րդ կետի 4-րդ ենթակետը և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 7-րդ և 9-րդ ենթակետերը, լսելով ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2025 թվականի ֆինանսական տարվա եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման վերաբերյալ՝

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 2).

1. Հաստատել ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականը (միաձայն կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

3. ԼՍԵՑԻՆ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Ռ. Հակոբյանը ներկայացրեց Գավառի պետական համալսարանի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը (կցվում է): Զեկուցողը նշեց, որ ԳՊՀ-ն 2026 թվական մուտք է գործել 165.625.700 ՀՀ դրամ մնացորդով:

2026 թվականի համար նախատեսված են 237.636.900 ՀՀ դրամի եկամուտ և 296.693.200 ՀՀ դրամի ընթացիկ ծախսեր: Նախատեսված ծախսերը գերազանցում են եկամուտներին, պակասորդը կֆինանսավորվի նախորդ տարվա դրամական միջոցների մնացորդով: Պլանավորվել է 18.900.000 ՀՀ դրամի կապիտալ ծախսեր: ԳՊՀ բյուջեում աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերը կազմում են 240.000.000 ՀՀ դրամ, սակայն դրանք ներառում են նաև պետական բյուջե վճարումները (հարկեր, պարտադիր վճարներ): Կոմունալ վճարների համար նախատեսվել է 16.220.000 ՀՀ դրամ: Գիտահետազոտական գործունեության համար նախատեսվել է 7.050.000 ՀՀ դրամ:

Նախատեսվում է 2027 թվական մուտք գործել 87.669.000 ՀՀ դրամ մնացորդով:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի ֆինանսական տարվա ԳՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի մասին հարցը դրեց քվեարկության:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 10-րդ կետերով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 28-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով, 31-րդ հոդվածի 14-րդ մասով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 40-րդ կետի 7-րդ և 9-րդ ենթակետերը, 54-րդ կետի 5-րդ ենթակետը և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 7-րդ ենթակետը, լսելով ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 3).

1. **Հաստատել ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**
2. **Հանձնարարել ռեկտորին՝ 2026 թվականի ծախսերը կատարել, այդ թվում՝ աշխատավարձերը, բոլոր տարակարգերի աշխատակիցների, ներառյալ՝**

ղեկավար կազմի պարգևատրումները վճարել ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

4. ԼՍԵՑԻՆ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքի մասին ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Ռ. Հակոբյանը ներկայացրեց ԳՊՀ կառուցվածքը (կցվում է), որը ներառում է հումանիտար մասնագիտությունների և բնագիտատնտեսագիտական ֆակուլտետները՝ առկա և հեռակա բաժիններով, սպասարկող ութ ամբիոն, որակի, ակադեմիական քաղաքականության, մարդկային ռեսուրսների կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինները, հաշվապահությունը, տնտեսական բաժինը, մյուս կառուցվածքային ստորաբաժանումները, ինչպես նաև ԳՊՀ ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը և ԳՊՀ արհմիությունը:

Նշվեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բուհը պարտավոր է ունենալ էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ: Այդ նպատակով ստեղծվել է էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ, որի վարիչը և մասնագետներն իրենց համաձայնությամբ աշխատելու են հասարակական հիմունքներով:

Պարոն Ղազարյանը ԳՊՀ կառուցվածքի հաստատման հարցը դրեց քվեարկության:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13.1-րդ կետով, 27-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 28-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 16-րդ կետի 6-րդ ենթակետը, 38-րդ կետը, 40-րդ կետի 5-րդ ենթակետը, 54-րդ կետի 5-րդ ենթակետը, ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 4).

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

5. ԼՍԵՑԻՆ.

«Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակի մասին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Ռ. Հակոբյանը ներկայացրեց բուհի հաստիքացուցակը (կցվում է):

Առաջարկվեց ԳՊՀ բոլոր տարակարգերի՝ ակադեմիական, վարչական, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական անձնակազմերի աշխատավարձի բարձրացում՝ 10 տոկոսի սահմաններում:

Զեկուցողը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Գավառի պետական համալսարանի հաստիքացուցակի նախագծում առաջարկվել են հոգաբաձուների խորհրդի քարտուղարի աշխատավարձի հավելավճար, ինչպես նաև գիտական խորհրդի քարտուղարի աշխատավարձի հավելավճար:

Քննարկումից հետո հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը հարցը դրեց քվեարկության:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13.2-րդ կետով, 27-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 40-րդ կետի 6-րդ ենթակետը, 54-րդ կետի 5-րդ ենթակետը և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 6-րդ ենթակետը՝

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 5).

1. **Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելված 2-ի (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**
2. **Սահմանել, որ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 1-ից (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**

6. ԼՍԵՑԻՆ.

‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգի մասին ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի զեկուցումը:

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացրեց ‹‹Գավառի պետական համալսարան›› հիմնադրամի էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը: Ռ. Հակոբյանը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը քննարկվել և հավանության է արժանացել գիտական խորհրդի կողմից: ԳՊՀ էթիկայի, բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգի նախագծի մշակման ընթացքում հիմք են ընդունվել ԳՊՀ էթիկայի կանոնները:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը հարցը դրեց քվեարկության:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,, 28-րդ հոդվածի 1-ին մասով, 9-րդ մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետը, 40-րդ կետի 18-րդ ենթակետը, 54-րդ կետի 8-րդ ենթակետը և Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 18-րդ ենթակետը՝

ՈՐՈՇԵՑԻՆ

(Որոշում N 6).

1. **Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը (միաձայն. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):**

Օրակարգի հարցերը սպառելուց հետո **արտահայտվեցին.**

Հայկ Ղազարյանը, ով բարձր գնահատեց ԳՊՀ ռեկտորի և ամբողջ անձնակազմի աշխատանքը, նշելով, որ համալսարանը ոչ միայն գործում է, այլև զարգանում է համաատեղ ջանքերի շնորհիվ:

Հրանուշ Հակոբյանը, ով բարձր գնահատեց ԳՊՀ ողջ աշխատակազմի համախմբված, նվիրված և կազմակերպված աշխատանքը: Առանձնակի կարևորեց ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը: Նա նշեց, որ Գավառի պետական համալսարանը լիարժեք և օրինակելի կերպով կատարում է իր բոլոր հարկային պարտավորությունները, նաև ուրախությամբ արձանագրեց, որ «Հայաստանի Հանրապետության լավագույն ուսանող» մրցույթում հաղթողների շարքում են Գավառի պետական համալսարանի ուսանողները: Ընդգծեց ուսանողների մասնագիտական ձեռքբերումները, կարևորեց նրանց մասնակցությունը Եվրոպական միության ծրագրերին, ինչպես նաև բարձր գնահատեց այն հանգամանքը, որ արտասահմանում ուսանելուց հետո ուսանողները վերադառնում են հայրենիք:

Հրանուշ Հակոբյանը առանձնակի կարևորեց, որ Գավառի պետական համալսարանը ձևավորում և զարգացնում է սեփական կադրային ներուժը՝ պատրաստելով գործատուների կողմից պահանջված մասնագետներ: Նշեց, որ բուհում աշխատում են բազմաթիվ գիտությունների թեկնածուներ և դոկտորներ, ինչպես նաև կարևորեց բուհ–դպրոց համագործակցության դերը:

Գավառի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը ամփոփեց խորհրդի աշխատանքը, և նիստը հայտարարեց փակված:

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի

նախագահ՝ **Էդուարդ Ղազարյան**

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի

քարտուղար՝ **Հասմիկ Մարգարյան**